ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՎԵԼ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ

13.09.2021 00:25

2021 թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրությունը:

Քվեարկությանը մասնակցել են 1111 փաստաբան:

Քվեարկության արդյունքներով Սիմոն Բաբայանի օգտին քվեարկել է 937 փաստաբան, իսկ Գևորգ Գյոզալյանի օգտին՝ 144 փաստաբան: 30 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.09.2021թ. որոշմամբ՝ չորս տարի ժամկետով Սիմոն Ալբերտի Բաբայանը համարվել է ընտրված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի պաշտոնում՝ 1111 փաստաբանների 937 կողմ ձայներով (84,3%):

ՀՀ փաստաբանների պալատի նոր նախագահի լիազորություններն սկսվելու են 2021 թվականի հոկտեմբերի 5-ից:

Բեռնել՝ Հաշվիչ հանձնաժողովի որոշումը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրվելու մասին

Բեռնել՝ Հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը

Բեռնել՝ Հաշվիչ հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })